«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 11
09.06.2022թ.

1. Ագրարայինից ագրոտեխնոլոգիական համալսարան վերափոխվելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց հավանություն տալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Հայաստանի ագրոտեխնոլոգիական համալսարան» անվանափոխելու և վերաբրենդավորելու նախաձեռնությանը և, այն հիմնավորող փաստաթղթում գիտխորհրդի անդամների առաջարկած լրացումները կատարելուց հետո, դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին ու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ անվանափոխության գործընթացը, ՀՀ-ում գործող իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով, ավարտին հասցնելու համար:

2. Համալսարանում կրթության որակի ապահովման և վերահսկման ընթացքի, բարելավման ուղիների վերաբերյալ.

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Լ. Զաքարյանին կազմել ու ներկայացնել վեցամսյա հաշվետվություններ:

3. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2022թ. մայիսի 4-ին հայտարարված ամբիոնի վարիչի թափուր պաշտոնների մրցույթի կազմակերպման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները.

3.1. ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա («կողմ»՝ 37, «դեմ»՝ 10, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 0) Մարինե Սաշայի Մարկոսյանն ընտրված է ՀԱԱՀ Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

3.2. ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա («կողմ»՝ 41, «դեմ»՝ 6, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 0) Աշխեն Գրիգորիի Գրիգորյանն ընտրված է ՀԱԱՀ Գյուղատնտեսական կենդանիների մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

3.3. ՀԱԱՀ գիտական խորհրդի փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա («կողմ»՝ 38, «դեմ»՝ 9, «անվավեր քվեաթերթիկներ»՝ 0) Հայկ Սաշայի Կիրակոսյանն ընտրված է ՀԱԱՀ Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ